

ՆԵՐՆՈՒՆՄԵԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԱՍԻՍ

Տարեկան գինը 10 ռուբլի, հէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Масакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլեֆոն № 253.

Կմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաւօրեայ օրերէն).
Յայտարարութիւնները ընդունվում է ամեն լեզուով.
Յայտարարութիւնները համար վճարում են
խրաջանիւր տողատեղին 10 կոպէկ.
Տէլեֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Պաշտօնական հաղորդագրութիւն.—Ներքին
Տնտեսութիւն. Վանական տնտեսութիւնը. Նա-
մակ Շուկաւերից. Նամակ խմբագրութեան.
Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նա-
մակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր.—Հե-
ռոսթրներ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ.—Մի նոր պիեսի առիթով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ապրիլի 27-ին, առաւօտեան ժամի 10-ից
սկսած, Թիֆլիսի կենտրոնական փողոցների
վրա երեւացին շատ բանտարներ, որոնց թիւը
մոտաւորապէս հասնում էր 1000-ից մինչև
1200 մարդու Շրջվելով դռանոց հասարակու-
թեան հետ միասին մայիսի վրա՝ նրանք
սկզբում ոչ մի բանով կարգը չէին խանգա-
րում. բայց կէսօրվայ մօտ ժամի 12-ին, նը-
րանց մի մասը, մօտաւորապէս բաղկացած 100
հոգուց, արագութեամբ միացաւ Գործիւնակի
պրօսպեկտի մէջտեղում, արքունական թա-
րօնի հանդէպ, մի խումբ կազմեց և «ուրա»
աղաղակելով՝ բարձրացրեց կարմիր դրօշակ:
Երևում էր, որ ցուցարարները դիտաւորու-
թիւն ունէին առաջ գնալ Գործիւնակի պրօս-
պեկտով՝ Սակայն ոստիկանութեան ուժեղա-
ցած կազմը և՛ չէր թողնում հնարաւորութիւն
չը տուին ամբարձրել անցնող, իսկ անցա-
կաղ վրա հասած ոստիկանապետը՝ ձիաւոր
պահապանների հետ միասին՝ ցրվեց ցոյց ա-
նողներին՝ թողնելով չը տարվում ուրիշ բանտարների
միասնալ նրանց հետ:

Մօտաւորապէս 10 րոպէսում կարգը փողոց-
ներում վերականգնվեց. Ձերբակալվեցին 63
հոգի. Ցուցարարների և ոստիկանութեան մէջ
տեղի ունեցած ընդհարման ժամանակ ծանր
վնասվողներ չեղան:
63 ձերբակալվածներից 30 հոգի արձակվե-
ցին բանտից, որովհետև վիանքի ցուցումով
անհնար էր ճշտորէն որոշել նրանց մայմանկ-
ցութիւնը անկարգութիւններին Միտացած 33

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ՆՈՐ ՊԻԵՍԻ ԱՌԻԹՈՎ

Անցեալները Բագուի ժողովարանի դահ-
լիճում խաղացին պ. Ալեքսանդր Աբէյանի
«Մարվող ճրագներ» նոր պիեսը, որի առիթով
մի քանի խումբ անկողնային համարում
«Արդէն «Մշակ» ընթերցողներին (84-րդ
համարից) ծանօթ է պիեսի նիւթն ու բովան-
դակութիւնը, ուստի նոյնը կրկնելու հարկ չը
տեսնելով՝ կանցնեմ նոր պիեսով հանդէս բեր-
ված տիպերին:

Մեր գաւառական կեանքում ծերունի Յա-
կոբները իրանց պառու Աննաներով և Մար-
թաները իրանց փեսացու Միսաններով վա-
ղուցվալ ծանօթներ են. նոր են, նոր կեանքի
պտուղներ են՝ նոր քաղաքացի Ալեքսանդր
պարոնները, Ներսէս և Սերոբ զփայտները,
սակայն արանք բոլորն էլ ի միասին այժմ
ընդհանրացած տիպեր են:

Ուրեմն իրական կեանքից վերցրած մարդ-
կանց ճիշտ պատկերներն է ուզում հանդէս
բերել մեզ հեղինակը այդ պիեսով:

Ծանկութիւնը գովելի է, ինչպէս նկարիչը
իր արուեստական գոյններով, դերասանը իր
մտածված և զգածված խաղով, այնպէս և ի-
րական կեանքից պիեսներ գրող հեղինակները
այսպատու, ձգտում են հետեւել բնութեան,
մօտենալ իրականին կամ բնականին:

Հետեւապէս իրականը մեզ լաւ չափ կամ
«մասշտաբ» կարող է ծառայել՝ գեղարուեստա-
կան գործի բնականութիւնը և անբնականու-
թիւնը չափելու համար:

հոգին Թիֆլիսի նահանգապետի կողմից են-
թարկվեցին բանտարկութեան զանազան ժա-
մանակամիջոցներով, սաստկացրած պաշտպա-
նութեան օրէնքի զօրութեամբ:
Բանտարկվեցին հետեւեալ անձինք.

ԵՐԷՔ ԱՄԱՌՈՎ

- 1) Գէորգի Նուցուրիձէ, Թելաւ քաղաքի բը-
նակիչ:
- 2) Մարիա Միքայելովնա, Օղուրգէթի գաւա-
ռի Վարկաշուարի գիւղի բնակիչ:
- 3) Գէորգի Տաբրիձի, Թելաւի գաւառի Շա-
պիւանի գիւղի բնակիչ:
- 4) Նիկոլայ Պոնիւձէ, Բաշայի գաւառի Գո-
րիս-Ուրանի գիւղի բնակիչ:
- 5) Գէորգ Յակոբեան, Թիֆլիս քաղաքի բը-
նակիչ:
- 6) Փրիգոն Մէնդիլիւի, Գորու գաւառի
Գէմէրտի գիւղի բնակիչ:
- 7) Սպիրիդոն Արշուձէ, Գորու գաւառի
Պաւի գիւղի բնակիչ:
- 8) Նազար Գաբրիէլով, Թիֆլիսի գաւառի
Ախալօթի գիւղի բնակիչ:
- 9) Նիկոլայ Միլոյեանց, Թիֆլիս քաղաքի
բնակիչ:
- 10) Բախո Բարտաշեւ, Թիֆլիս քաղաքի
բնակիչ:
- 11) Գէորգի Մէնդիլիւի, Սոխալի գա-
ւառի Բաբայի գիւղի բնակիչ:
- 12) Լուկա Լէօնով, Գորու գաւառի
Կոնստանտինի գիւղի բնակիչ:
- 13) Դանիէլ Կոնստանտին, Սոխալի գաւառի
Սամարեղի գիւղի բնակիչ:
- 14) Արիլի Էրապիձէ, Օղուրգէթի գաւառի
Լանչիստի գիւղի բնակիչ:
- 15) Լեւոն Լէսուրաշիլի, Թիֆլիսի գաւառի
Դիւրմ գիւղի բնակիչ:

ԵՐԷՔ ԱՄԱՌՈՎ

- 16) Ջախարի Արշուձէ, Գորու գաւառի
Պաւի գիւղի բնակիչ:
- 17) Նիկոլայ Մելիձէ, Գորու գաւառի
Մալխաշի գիւղի բնակիչ:
- ՄԷԿՈՎ ԱՄԱՌՈՎ
- 18) Ջախարի Օնայիլի, Թիֆլիսի գաւառի
Պատրիշի գիւղի բնակիչ:

Այժմ տեսնե՛ք, կեանքի մէջ ինչ տեսակ, ինչ
գոյնի մարդիկ են նրանք, ինչ դէմքեր և հոգե-
տէր, ինչ լաւ և վատ կողմերով են յայտնի
այդ նկարիչները, և սրբան են յաջողված
նրանց լուսանկարները:

Ձիգ տարիներով չարքալ կեանքի երեսից
կորացած, վշտաբեկ դէմքերով մարդիկ են այդ
ծերունի վարպետ Յակոբները. նրանք սուսա,
նախապաշարված, ամօթխած, ախաղաղէր,
ժամաւէր, չափաւոր, չարքալ, ծիսամոլ, ազէտ
և բարի ծերունիներ են իսկական կեանքում:
Եթէ ինչու են նրանց մէջ նեղուրտ, զայ-
րացկոտ չարքեր, անբաւական բամբաստողներ,
եթէ լինում են և հայոյոյններ, ինչպէս «բա-
նին Աստուծոյ» գրքերի վրա խեղադրված
ցնդածները—սրանք եղակի բացառիկ տիպեր են:

Սրանց մեծ մասը ամբողջով էլ յիշում են
ժամանակները, երբ ամօթը, խիղճը, պատիւը,
երախտիքը, հաւատը, սէրը, պապական աւան-
դութիւնները և լեզուն հրաշքաւոր չէին առւած
իրանց հարազատներին. նրանք ցաւելով նա-
խատիւք են կարգում ժամանակին կեղծ սը-
նանկութիւններին, կնոջ անպարկեշտութիւնը,
ընտանեկան պատուի անկման, անհաւատու-
արարքներից չը վախեցողների գլխին. նրանք
յաճախ սիրում են կրկնել այն ժամանակների
մասին, երբ տաւը ձուռն մի իւր մայր իւր
արծէր (11/2 կ.), այն երկնիկ ժամանակների
մասին, երբ կինը մի ձեռք հարսանեաց հա-
զուտով տաւը գատիկ էր անց կացնում, երբ
գողերն ու աւազակները այսպէս հեշտ չէին
կողոպտում մեզ և միւս օրը արձակվում բա-
տերից:

Նրանք սարսափով են մտաբերում հաւատի,
ընտանեկան պատուի դէմ խանդի գործը զրած
հալածանքները, նրանք երախտագիտութեամբ

- 19) Պետր Մամաւախիսով, Գորու գաւառի
Ախաղաղ գիւղի բնակիչ:
- 20) Բորիս Կախիձէ, Գորու գաւառի
գիւղացի:
- 21) Սիլվեստր Գաբուձի, Գորու գաւառի
Գիւլիսի գիւղի բնակիչ:
- 22) Դանիէլ Բիւրկուլով, Թիֆլիսի գաւառի
Պատրիշի գիւղի բնակիչ:

ՄԻ ԱՄԱՌՈՎ

- 23) Իլիա Յալէտաձէ, Թիֆլիսի գաւառի
Մալի-Տօնտի գիւղի բնակիչ:
- 24) Ալեքսէյ Չիտալիլի, Թիֆլիսի գաւառի
Գրան գիւղի բնակիչ:
- 25) Իօսիֆ Կոնստանտինովի, Սոխալի գա-
ւառի Բորի գիւղի բնակիչ:
- 26) Գէորգի Պրիւսով, Թիֆլիս քաղաքի
բնակիչ:
- 27) Մոյսէյ Բուրկուլով, Օղուրգէթի գաւա-
ռի բնակիչ:
- 28) Իօվ Մէսիձէ, Ախաղաղ քաղաքի բնա-
կիչ:
- 29) Դանիէլ Գոնիձէ, Գորու գաւառի Կա-
թիսի գիւղի բնակիչ:
- 30) Շաքրո Պաշարով, Թիֆլիս քաղաքի բը-
նակիչ:
- 31) Տիգրան Ջակոնով, Թիֆլիսի գաւառի
Վալիւ գիւղի բնակիչ:
- 32) Գրիգորի Շահնազարով, Թիֆլիս քա-
ղաքի բնակիչ:
- 33) Իվան Գրաշուկիլի, Թիֆլիսի գաւառի
Սաղաթիւ գիւղի բնակիչ:

Այս որոշման գործարարութեան սկիզբը հա-
մարել 1903 թւականի ապրիլի 27-ի երեկոյ-
եան 9 ժամին:

ՎԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ

Այս տարի էլ միաձնի վանքի նախաձեռնե-
լաւ ու պատրաստվեց Պատճառն այն է, որ
ոչ միայն նախաձեռնեւ, այլ և առհասարակ
վանական տնտեսութիւնը քանակաւոր կառա-
նեւոր է:

Եւ այս անկարգութիւնը տեղի է ունենում
ամեն տարի. Բայց գիտե՛ք, թէ ինչ անտանելի
և մինչև անգամ զղուշի դրութիւն է առաջ

օրհնում են քրիստոնեայ թագաւորի կեանքը
և գանգաւում թանգութեան, այսօրվայ դժ-
ուար ապրուստի մասին և կրկին փառք տալիս
Երկնային Թագաւորին:

Նորամուծ Ֆուսակար օտարութիւնների չար-
քում և օգտակարներին—ինչպէս կանանց կըր-
թութեան գործին, թատրոնին, դերասանին և
լաւ իւր տասնամյակներին,—չաւ էլ հաշտ աչքով
չեն նայում. Շատ էլ գոհ չեն, որ մի-երկու
նոր վարպետներ սիրած մատաղների և քե-
լեխների օգտին չեն խօսում և ուստա Մի-
նասներին թողած՝ բժշկներին ենք դիմում
միւս աշխարհի ճանապարհներին համար:

Սակայն տեսնելով արանց թաւութիւնները,
լսելով արանց ուղիղ ու թիւր կարծիքները,
թէ և մեծ ծիծաղում ենք, բայց և այնպէս գնա-
նատու կարեկցում և համակրում ենք այդ
ծերունիներին. Որքան էլ մեզ ծիծաղելի է
«Պէպոյի» մէջ Գրիգորի զանազան օտարութիւնը
և փրկութիւնը նոյնքան էլ սիրելի է նա
իր կարեկից և բարի սրտով:

Հերքել, թէ նոր պիեսի մէջ ծերունի վար-
պետ Յակոբը զօրակ է իր տիպին յատուկ ա-
ռաւելութիւններից և թաւութիւններից՝ չէ
կարելի, բայց թէ հարկաւոր չափաւորութիւնը
տեղի է տուել ծայրայեղութեան—այդ էլ ճիշտ է:
Թէ ծերունու համբարատար, բարեպաշտ բը-
նաւորութիւնը իր վշտերի միակ սփոփանք և
միջնորդութիւնը գտնում է բանին Աստուծոյ
գրքի մէջ—այս շատ բնական է, բնական, նոյն-
իսկ հաճելի է, որ նա իր աւելորդ աստուա-
ծաւոր կողմերով մեր ժպիտն ու ծիծաղն է
չարժում. բայց այն րօպէներում, երբ նրա
ընտանեկան արտամաշ խեղճութիւնը իր հա-
րազատների, իր առողջ ու չեղված Սերոբից
և տան սին—հիւանդ Ներսէսի հոգեվարք

գալիս, երբ նախաձեռնեւ այսպէս ամիսներով
ուշացնում են. Ամեն ամիս փող են պահան-
ջում գանձապետից՝ անհրաժեշտ ծախսերի հա-
մար, իսկ գանձապետը անկարող է փող բաց
թողնել, որովհետև նախաձեռնեւ չը կայ, ամեն
բան անորոշութեան մէջ է. Բայց վանքի ահա-
գին ծախսերը անորոշ դրութիւն ամենին չեն
սիրում, նրանք՝ այդ անհրաժեշտ ծախսերը
սովորական կարգով կանոնաւոր կերպով առաջ
են գնում, իսկ փող և ոչ մի տեղից. Վանա-
կան կառավարութիւնը, անհրաժեշտ մուրացկանի
նման ուղղութիւն անելով և մուրալով է կա-
ռավարում. Ապառիկ և անվճար գներով Վա-
ղարչապետից և Երևանից հազար ու մի տե-
սակ պիտոյներ են գնում հերիք չէ, դեռ շատ
անգամ էլ մի մասնաւոր մարդու, մի Չաքա-
րեանից, մի Փոթէեանից փող է պարտք ա-
նում վանական կառավարութիւնը, որպէսզի
վանքի և իր հաստատութիւնների առօրեայ
անհրաժեշտ պիտոյները և կարիքները հոգայ:

Փոքր ի շատէ լուրջ մտածողը միանգամայն
կը զարմանայ, թէ ինչ կը նշանակէ սրանից
նրանից փող պարտք վերցնելով կառավարել
էլ միաձնի մայր եկեղեցին իր բազմաձայն
հաստատութիւններով, որպիսիներն են՝ ճեմա-
րան, տպարան, վեհարան, ագարակ, մայր տա-
ճար և վանքի երկու հիւրատուն իրանց ձրեա-
կեր լորդերով. Հաստատութիւնները իրանց
հարկաւոր ծառայողներով երբեմն, նոյն-իսկ
շատ յաճախ մնում են առանց փողի, առանց
վարձատրութեան, ոչ թէ միայն այն պատ-
ճառով, որ փող չը կայ, այլ գլխաւորապէս
այն պատճառով, որ անկանոնութիւն է թա-
գաւորում և քանակների քանակաւոր ամեն մի
կողմից. Օրինակի համար՝ վանական կառավա-
րութեան գանձապահ վարպետից երբ փող
ուզեն նա պիտի ասէ չը կայ, եղած ժամա-
նակն էլ չը կայ, չեղած ժամանակն էլ չը կայ.
միշտ չը կայ, չը կայ ու չը կայ. Եթէ տուտ
են առում, թող վկայէ Յուսիկ վարպետ
Ջոհարեան, որ ստիպված է ճեմարանի ծախ-
սերի համար յաճախ փող խնդրել վանական
կառավարութեան չէ՛ք չորեքդարձ զանա-
պահ վարպետից. Յուսիկ վարպետը, ի
հարկէ, նախ քաղաքավարի կերպով է փող
խնդրում. երբ մերժում է՝ պահանջում է, մէկ

տասնականներից, ծանր հարուածների տակ հե-
ծում և համակում է մեզ հանդիսակներին,
նա, որ աւելի շատ պէտք է զգայ վշտի խո-
րութիւնը և իր ցաւով աւելի ևս մեզ վարա-
կէ՝ մայքան է յափշտակում բանին Աստու-
ծոյ՝ գրքով, որ կարծել է տալիս, թէ նա
խանդարվել, անզգայացել է դէպի վիշտը. Ահա
այս թերութեամբն է, որ այդ տիպը դառնում
է անորոշ և անգոյն:

Նայենք այժմ կեանքի մէջ շատ չար ու բա-
րի տեսած Աննաներին:

Թախալից դէմքով, հոգեւոր դրոշմը ճակա-
տին, վաղա՛հաւ խորշմներով պատաւած այդ
Աննաները մեծ մասամբ դերասանաւոր, սու-
տիպաւոր, կարեկցող, սակաւապահանջ, նա-
մուտով, սրտացաւ, ջանասէր և չարչարվող պա-
ռուներ են. Յետին մտքերով կեղծ բարեկա-
մութիւնը դրանց անմարմնելի է. բախտի մի
ժպիտ, պատահական մի աննշան աղողութիւն
բաւական է դրանց գոհացնելու. Սեփական
ցաւից այնքան կսկիծ, որտի մորմուք չեն զգայ
որքան իրանց հարազատներին հասած փառքիկ
դժբախտութիւնից «Հասած» զաւակների կար-
ճատեւ բախտաւորութեան արժանաւոր—այդ
նրանց մեծ երջանկութիւնն է. Ասեղծ ծայրով
անքուն լուսացած գիշերների ինայած կօ-
պէկները չեն խնայի դրանցներից, բախտ բա-
ցողո՞ւներից ուշացող բախտ արգելքները վե-
րացնելու համար. Պարզ ու միաբաւ, երկնաւոր
ու ամօթխած Մարմնները նրանց աչքի լոյ-
սը, տան ճրագները և մեծ հոգեւոր են, և ոչ
մի թանգ գնով անպատուութեանը թող չեն
տայ մարեկու իրանց տան, մարդու օջախի
այդ ճրագը. Դիմաւորված խաղաղ սասա-
նանքից միայն երկիւղ ունի նրանց պարզա-
մտութիւնը և դերասանաւորութիւնը. իսկ երբ

էլ մերժվելուց յետոյ՝ արդէն «եւրոպայ-բողոք» է լինում էջմիածնի ֆինանսական հետ. սա արդէն հրաշալի տեսարան է. Բմանաճոյք չէ սա. Թող վկայէ կառավարութեան միւս անդամը—Եղիշէ վարդապետ Անարնեանը. Թող վկայէ նոյն-իսկ նախագահը, Ղեւոնդ եպիսկոպոսը, վկայէ կառավարութեան քարտուղար պ. Ղեւոն Ապանին. վերջապէս Թող վկայեն նոյն կառավարութեան ծառայ Մկրտիչը և Թումանջանի—Նախկին գումանաճի՝ Կարսի. պատահել է որ առանց անսխալութեան մէկը փող ստանայ վանական կառավարութեանից:

Մի խօսքով վանքում հրամանագրի ամենեւին չը կայ. բոլորն էլ հրահանգող են, բոլորն էլ սոսկ հրամայող, բոլորն էլ հեղինակ, բոլորն էլ գիտուն, բոլորն էլ փիլիսոփայ և որ ամենից պիտանին է, բոլորն էլ «աղագայտայ»:

Այնքան ընկող մի մեծ երևոյթ կայ այստեղ, որ իսկապէս զարմանալի է. Մայր Աթոռում չարքաչ աշխատատեղեր լուռ են, նրանք վարձատրութեան խնդիր չեն յարուցանում, բայց, դժբախտաբար, նրանք, որոնք «աղագայտայ» են, հանգիստ նստած վանքում ուտում խմում են և իշխանաբար իրանց կարգադրից եղբայր միաբաններին հրամայում. հէնց նրանք ամեն տարի ռոճիկների յաւելման խնդիր յարուցանելով պահանջում են, որ իրանց աւելի ռոճիկ, աւելի վարձատրութիւն տրվի: Թէ ինչու, մնում է անհասկանալի. Ներկայ Թումանջանի նախագահի ձգձգելու գլխաւոր պատճառներից միին էլ միաբանական ռոճիկների անարդարացի անհասարակութեան խնդիրն է. Ահա թէ ինչպէս.

Անունները դրել են միաբան եղբայրներ, բայց, դժբախտաբար, ստանում են քառասուն տեսակ ռոճիկ. Սրտի ցաւով պիտի խոտովանեն, որ վանքում միաբաններից շատ աշխատողը, շատ վատակաւորը համեմատաբար շատ քիչ է ստանում, իսկ, ընդհանրապէս, քիչ աշխատողը, քիչ վատակաւորը և ամենեւին գործ չը կատարողը աւելի է ռոճիկ և վարձատրութիւն ստանում կրկնապատիկ կերպով: Ոչ մի սկզբունքի, ոչ մի արդար խղճի դատաստանի չէ ենթարկվում միաբանական ռոճիկների վերին աստիճանի տեղը անհասարակութիւնը: Պայտօններ կան վարձատրվում են, պաշտօններ կան չեն վարձատրվում: Օրինակի համար, փոխանակ դատողութիւնների և եղբայրութեանների՝ ես առաջ կը բերեմ այստեղ իրականութիւններ, որոնք շատ պարզ կերպով կապացուցանեն, որ մեր վեղարաւորները ոչ թէ միաբանական ուսում և եղբայրութիւն են կազմում, այլ բառի բուն նշանակութեամբ կազմում են անմիաբան ուսում և անսիրտ ու անզգացմունք մի եղբայրութիւն: Եթէ սուտ են ասածներս՝ Թող հերքեն բոլորը միասին. ես խօսքս յետ կանեմ և մինչև անգամ հրապարակով ներողութիւն կը խնդրեմ բոլոր մեր վեղարաւոր սրբազան և սուրբ հոգեւոր հայրերից: (Կը շարունակվի)

Դժբախտութիւն ունեցան այդ փորձանքին հանաճարելով՝ այն ժամանակ լուռ են մնում գառն-Մարտի ան ի՞նչ համարձակութիւն չի ունենալ ընդդիմութիւն ցոյց տալ իր ծնողներին, այլ և իր օն երեսը նրանց ցոյց չը տալու համար աւելի շուտ գետնի տակ կը ծածկէ, երբեմն նոյն-իսկ խաբեբայի կեանքն էլ չը խնայելով Սակայն նոր պիտեմ մեզ ասում է. այդ վող էր, որ այդպէս էր. այժմեան Անանները գլխաւոր մեղաւորներն են իրանց Մարթաների անպատուութեան Թէ կան Բագրուի պէս քաղաքներ և այդպէս վարակված Անանները դրան հակառակ չենք. չէ որ դրանք վաղուց արդէն հրաժեշտ են տուած ամեն նախապետական կարգերին: Դրանց ճրագները վաղուց է որ մարած են: Այդ վարակված, այլադրական Անանները չըմանում այլ ևս ինչ գործ ունի նախապետականութիւնը. այն ժամանակ էլ ինչու պէտք է Անան ասելու ու թելի վրա անջուռն գիշերներով Մարտի ան ի՞նչ արտադրից կուսենայ Մարթան այն միաբան անմեղութիւնը, էլ ի՞նչ կը մնայ ծերունի Յակոբի ծայրայեղ բարեպաշտութիւնը...

Ոչ, այսպիսի նախապետական ընտանիքում Մարթաները հերոսութեան են ընդունակ և դրանց պատկերացնող պիտեմ փոխանակ «Մարտի ճրագներ» անունը կրելու. «Անան» ճրագներն անունով պիտի հանդէս գայ, ի հարկէ բեմը փոխադրելով Բագրուի մի այլ գաւառական քաղաք, Թողնելով Ներսէսին և Սերոբին այդտեղ:

Բաւական աղոյ է գործարանական կեանքի զո՞ւ տառապող Ներսէսի պատկերը:

Անան Թերութեամբ հանդերձ աղոյված կարելի է ասել հարուստ հարեանի որդու՝ Ալեքսանի տիպը, որը որքան և զգուշիկ իր

ՆԱՄԱԿ ՇՈՒԱՎԵՐԻՑ

Ապրիլի 20-ին

Ձը նայելով մեր գիւղի փարթամ բուսականութեան ու անմահական «Բլբլանի», «Ջան-Ղուրդարանի» ու «Տէր-Վարդան» աղբիւրների ջրերի թրքախտաւորների թիւը օրէցօր աւելանում է. Կար ժամանակ, երբ քաղաքներից թրքախտաւորներին բժիշկները ուղարկում էին մեզ մօտ բժշկվելու, բայց այժմ տեղացիներից շատ կան թրքախտաւորներ:

Ուսման թրքախտի պատճառը վերագրում են գիւղի տների սաստիկ խտութեան ու անմաքրութեան, որի վրա թէև իշխանութիւնը ու շարքութիւնը դարձնում է. բայց ծուռ ու մուռ փողոցների ու գոմերի պատճառով ցանկալի մաքրութեան չեն հասնում: Մեր կարծիքով թրքախտը չը պիտի փերագրել միայն անմաքրութիւններին. քիչ չեն նպաստում նրա տարածվելուն անուշիկ պակասութիւնն ու խոնավ բնակարանները, մասնաւոր գիւղերում յաճախակի պատահող «սաթիլվումը» (Թրքերի բորբոքումը), որի միջոցին եթէ հիւանդին բժշկող չը կայ ու նրա կրօնը չը տանելով մեռնում է, գիւղացիք ասում են «առու» էր, բժշկել չէր կարելի. Իսկ եթէ ունեւ իրանց ամոր կազմուածքի պատճառով տանում են հիւանդութիւնը, աւելի վատ, արդէն թրքախտաւորը պատրաստ է, որից վարակվում են ընտանիքի միւս անդամները, որովհետև գիւղացին թրքախտի վարակման մասին ոչ մի հասկացողութիւն չունի:

Քիչ չեն մեղանում տարածված մանկական ու կանացի հիւանդութիւնները, որոնք մի քանի տարում հալումալ են անում առողջ գեղջկուհուն ու շուտով նրան գերեզման իջնում: Հաւանական է, որ մեր գիւղում շուտով բոյն կը դնեն և վնեւրական ախտերը, որովհետև մեր գիւղացիները աշխատանքի համար երբեք օտարութեան չեն դիմում, բայց հողի սաստիկ քրոթեան պատճառով վերջին երկու տարին գիւղից բացակայում են չորս հարիւրից աւելի թարմ ոյժեր, որոնց բացակայութեան շնորհիւ այս տարի այդինքն բոսմ աշխատող մշակի օրավարձը հասաւ 80 կօպէկի:

Ուրեմն այս բոլորից յետոյ ինչ է հարկաւոր անել մեր գիւղացիներին: Եթէ ոչ միջապէս բժիշկ ունենալ: Բայց ինչ անեն գիւղացիները նրանք նոյն-իսկ իրանց ոյժերից աւելին աւրին, հաստատ և մշակական ռոճիկ առաջարկեցին հայ բժիշկներին, բայց ոչ քը չը բարեհաճեց թշուառ գիւղը գնալ:

Սրբաւոր կը տանք մեր գիւղացիներին այստեղեւն չը մտածել, որ բժիշկը անպատճառ հայ լինի: Ինչ արած է, հայ գեղջկուհին Թող թարգմանի բերանով պատմէ իր հիւանդութիւնները մի օտարազգի բժիշկի. գաղափար

անխիղճ և ստոր վարձուքով՝ նոյնքան և անտես յամառութեամբ անելով անում է խղճի ձայնը մեռնող մեր ժամանակուհի: Նրա եղբորիցների դժբախտութիւն չէ ճանաչում. խաբված, անարգած գոթ աղբիւրով անմեղ գոհերի մէջն է նրա բաւականութիւնը և հրճումը: Սակայն այս օտոր խաբեբայի անխիղճ վարձուքից, ընտանեկան սրբութիւնն ու երջանկութեանը փչող այս սրիկայից սպառնելի չէ, որ պէտք է խռովի, վրդովի նա, որ խղճալ, պաշտպանել գիտէ տկարին ու դժբախտին, կամ նա, որ զոհի սիրուց և գեղեցկութիւնից գերված նրա և իր երջանկութիւնն է երազում: Եթէ ոչ այն է, ոչ այս՝ կը նշանակէ վրդովվողը, պատճող պիտի լինի ինքը՝ աւարգվածը, տարրութեան զոհ, սակայն դա էլ չէ, այլ Սերոբը՝ անառակ եղբայրը, որ համարվում է ծնողների, ամբողջ ընտանիքի դժբախտութիւնը: Սա արդէն անբնական է:

Ահա այդ երկուսին, երկու կիսի բաժանված, երկուսն աւելի է, որ միացրած լինելով Սերոբի անձնաւորութեան մէջ՝ Թուլացնում է տպաւորութիւնը: Տիրանում ենք երկու ասարբեր գզացմունքների. սառկին գործողութեան մէջ զգուշիկ դարձած Սերոբը, հետեւալ գործողութիւններում մինչև իսկ մեր համայնութիւնն է շարժում, ոչ թէ իր անբնական մարդասպանութեամբ և զղջմամբ, այլ այն արդար գայլոթով, որով մարակում է հասարակական փառութիւնը, նորածիլ բուրժուականութիւնը իր անխիղճ բարքերով:

Երկուսից մէկը. կամ դա անառակ, սրիկայ չէ, կամ եթէ սրիկայ է, ինչպէս է, որ կենդանի է նրա մէջ գիտակցութիւնը և չէ հանգիւ մարդկայինը:

Այլ էր, եթէ նա մեզ ներկայանար անաշուղ

րական մարդիկ պիտի փնտռել ուրիշ ազգութիւնների մէջ:

Որովհետև ուսման բժիշկների անտարբերութիւնը դէպի գիւղերը վերագրում են յարմարութիւնների բացակայութեան, ուստի Շուլվէրի հասարակութիւնը այս օրերս դիմեց հարեան գիւղերին, խնդրելով օգնել Շուլվէրում մի հիւանդանոց հիմնելու. բայց մերժում ստանալով, մի համախօսականով դիմեց գաւառապետ պ. Շանյիկի միջոցով Թիֆլիսի պ. Նահանգապետին, խնդրելով նպաստ տալ գանձարանից Շուլվէրի հասարակութեանը գոնէ մի բուժարան հիմնելու և բժշկի ծառայութիւնը հաշուել արքունի Պ. Նահանգապետը յարգեց շուլվէրցիների խնդիրը, և անցեալ օրը հասարակութիւնը մի համախօսականով բուժարանի տնտեսական մասը կառավարելու և բժշկի ընտրութիւնը անելու համար, տանուէր պ. Մէրաբեանի նախագահութեամբ հինգ հոգուց մի մասնաժողով ընտրեց: Բուժարանը կը բացվի մինչև մայիսի հինգը. առ այժմ կը լինի չորս անհմակալ. շխութիւնը արդէն վարձված է ու դնում են հարկաւոր կառ-կարամիներ: Բուժարանը կունենայ փոքրիկ գեղատուն, ուր բժշկական խորհուրդը ու դեղերը ձրի է բոլոր շուլվէրցիների համար: Այն շուլվէրցին, որը բժշկին տուն կը հրաւիրէ պիտի վճարէ 30 կօպէկ: Վերջին պայմանը անհրաժեշտ է, որովհետև գիւղացուն կարգի տուրքներից շատ էլ հեշտ չէ. գլուխը թէ մասը ցաւոյն էլ բժշկին աշխատում է իրանց տուն տանել. իսկ այդ բժշկի ոյժերից վեր է:

Բուժարանը ընդարձակելու ու հարստացնելու համար կընդունվեն մասնաւոր նուէրներ: Սարո.

ՆԱՄԱԿ ԽՐԱՎՈՐՈՒԹԱՆ

Էջմիածին, ապրիլի 9-ին

«Հայագիտութեան Հանդէս» խմբագրութիւնը պատիւ ունի ձեռ յայտնելու, որ սոյն եռամսեայ թերթը հրատարակվում է նաև 1903 թվ. ընթացքում: Երկրորդ տարվայ չորս շաբաթում է միջի այլոց լոյս են տեսնելու հետեւեալ աշխատութիւնները.

- 1) A. Meillet, Remarques sur la grammaire historique de l'Arménien de Cilicie de M. F. Karst.
- 2) H. Hübschmann, Die altarmenischen Ortsnamen.
- 3) M. Ghazarian, Armenien unter der arabischen Herrschaft.
- 4) J. Karst, Das trilingue Medicinalglossar des Cod. 310 der Wiener Mechitharisten Bibliothek.
- 5) Agnes Finck und E. Gjandschezian, Brief des Photios an Aschot und dessen Antwort.
- 6) A. Merx, Armenisch-syrisches Glossar zu Eusebius's Kirchengeschichte.

հանգամանքներից յուսանալով կամ գիտնելովութեան ախտով տառապող մի հիւանդ. դա իր անգիտակցական դրութեան մէջ իր մեղքերով հանդերձ կարող էր մեր ցաւակցութիւնը շարժել, իսկ գիտակցական բազմաբնու մինչև իսկ դառնալ մեր համակրելին: Յանկալի էր տեսնել նրան այդ բնական դերուհի:

Վատ չէր լինի, եթէ ուսուս Միասնը աւելի երիտասարդ, աւելի տաք սէր, աւելի աշխոյժ և աւելի քիչ յիմար և միամիտ լինէր. չէ որ նա վաղ մը լաւ հասկացող սափրիչ, ինքնավստահ, հրաշագործ բժիշկ է:

Մի երկու խօսք էլ ընդհանուր թերութիւնների մասին:

Գաւառական կեանքը իր գաւառական լեզուն ունի. եթէ ստիպված ենք նրան իր լեզուից զրկելու՝ պէտք չէ, որ աւելի ևս անբնականացնենք նրան սոսաւ գ—խորթ բառերով ու խօսքերով. միթէ աւելի բնական չի լինի ասել. «ես», «մօտիկ տուր», «օղը խեղդող է» «ոյժ չունեմ, «ոյժից ընկել եմ», փոխանակ ասելու. «նայիր», «օղը հեղձուցիչ է» «ոյժերս սպառվել են»...

Նորածնոյժ սովորութիւնները՝ ձեռք և երես համարելով ընդունված չը լինելուց զատ ծիծաղելի են նախապետական ընտանիքում:

Ամբողջ պիտեմ չենք պատահում մնախօսութեան կամ մեծօրգի, որը շատ բան կարող է պարզել հանդիսականներին:

Մի այդպիսի մնախօսութիւնների մէջ ինքը Սերոբը եթէ չարդարացներ իրան, գոնէ կը ծանօթացնէր իր դժբախտ անցեալին:

Անանները թէև խմբից գործ են անում, բայց ոչ հրապարակով. եթէ բեմի վրա նրան օղի չը խմացնէ պ. հեղինակը՝ աւելի լաւ կը լինի Սերոբի էլ եթէ բեմի վրա կամ բեմից դուրս

7) E. Gjandschezian, Ein Brief des Grigor Magistros an den Emir Ibrahim, herausg.

8) Agop Manandian, Die neue Numerierung der in Kareneans Katalog verzeichneten Handschriften.

9) Գալուստ Տէր-Մկրտչեան, Փաւստոսի ձեռագրերը:

10) Մխիթար վարդ. Տէր-Մկրտչեան, մի քանի հին արձանագրութիւններ:

11) Ստ. Մալխասեանց, Ուղղագրութիւններ Ղազար Փարպեցու Պատմութեան և Թղթի:

12) Ստ. Կանայեանց, Սուրբ էջմիածնի մասնադարանի ձեռագիր պատմագիրներ, և այլն: «Հայագիտութեան Հանդէս» խոստացել են նաև աշխատակցել բազմաթիւ ուրիշ յայտնի հայագետներ. ինչպէ՞ս Prof. Gonybeare, Prof. Vetter, Prof. Gelzer, Prof. Jensen, Dr. Andreas, պրոֆ. Գր. Խալաթեանց և այլն:

Տարեկան բաժանորդագինն է Ռուսաստանի համար 5 ռուբլի: Հանդէսի 1903 թվ. առաջին պրակը շուտով կուղարկվի բաժանորդներին:

Խմբագրութեան անդամ և ներկայացուցիչ Ռուսաստանում՝ Կ. Մանանդեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 29-ին, Թիֆլիսի կաթօլիկների վեհափոխման եկեղեցում, որ գտնվում է Միջին փողոցի վրա, Տիրապօլի կաթօլիկական թեմի եպիսկոպոս բաբոն Նդուարդ Բօսպ հանդիսաւոր ժամերգութիւն կատարեց, որի ժամանակ կարգադրեց Պապի թուրքեր՝ գրված լատիներէն, վրացերէն և լեհերէն լեզուներով: Ապա եպիսկոպոսը քարոզ խօսեց Փրանսերէն լեզուով, որ պատէրներից մէկը թարգմանեց վրացերէն: Նկեղեցին լիքն էր հրաւիրված անձերով:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգում, «գաղականագետների ընկերական ընթերցան», ապրիլի 20-ին, ուր հիւրերի հետ միասին 200-ից աւելի մարդ կար, ակնատեսներն էլ այն ժամանց պատմութիւնները լսելուց յետոյ, որոնք անմիջական լուրեր ունեին Քիշնիվի ջարդի մասին, ներկայ եղողները որոշեցին ուղարկել անկարգութիւններից վնասված հրէական ազգաբնակչութեան օգնութիւն հասցնող կոմիտեի նախակ՝ արտայայտելով Պետերբուրգի գաղականագետների և այլ ինտելիգենտ պրօֆէսորներին պատկանող անձանց համակրութիւնը վրդովեցուցիչ բնուութիւնների գոհերին և խորին զայրոյթ հրէաների այն հալածանքի առիթով, որին, դժբախտաբար, մասնակցում են և ուսուց մամուլի մի քանի օրգանները: Հաւաքվածների թուում գտնվում էին, ի միջի այլոց Ն. Կ. Միխայլովիչ, Վաս. Ի. Նեմիովիչ-Նաչնիկո, Ա. Վ. Պօգոժեպ, Ն. Գ. Անդեանի, Վ. Պ. Վորոնցով, բժշկապետ Գ. Պ. Նիկոլսկի, Ֆ. Ի. Բարսեղյան, Օ. Ա. Շապիր, Գ. Ի. Բօգդանովիչ, Ա. Ի. Բօգդանովիչ, Մ. Պ. Միկալէիւսկի, Ա. Ա.

մարդասպան դարձնելու փոխարէն հերոսացնէր Մարթային, թոյն խմել տալով տեղի և անբնական ոյժն չէր լինի:

Սովայն սրբան էլ թերութիւններ գտնելու լինեց, չի կարելի ուրանալ, որ այս պիեսը ունի իր աղոյ, արժանաւոր և հիմնաւոր կողմեր, ունի և յարմարութիւններ՝ աննշան փոփոխութեամբ աւելի ևս կենսական լինելու: Թեքուն է նա այս և այն կողմը շեղելու համար:

Ծանկալի է ձեռ հանդէս բերված ընտանիքի հրաժեշտը նախապետական կեանքին, որիչ խօսքով նրան անցողական վիճակի ներկայացնելը,—բուսական է քիչ փոփոխութեան ենթարկել գործող անձերից Յակոբի, Անանայի և Մարթայի տարիքը, նիստն ու կացը, և դուրս ձգել սուրբ գրքերը, աղօթքն ու ասելը:

Գերադասելի է ձեռ նախապետական վարդ ու բարձր պարոններ լիճակը՝ այդ աւելի ևս հեշտ է, քանի որ պիեսում աւելի աչքի ընկնող, փայլող այդ կեանքն է: Բաւական է, որ առաջին գործողութիւնը Բագրուի մասն քաղաքից հեռու մի այլ քաղաքում կատարվի: Իսկ երկրորդ և երրորդ գործողութիւնները կարող են տեղի ունենալ Բագրուում, ուր Ներսէսի ծանր հիւանդութիւնը Մարթայի հետ ծնողներին դալ է ստիպում և ուր հանդիպում են հարեանի որդի Ալեքսանին և սափրիչ Մի-նասին:

Մնացած անյարմարութիւնների հարթելը հմուտ ձեռքի գործ է: Քիչ լրջութիւն, քիչ գոյն, լոյս և սոսուր, և այլ ևս չենք կարող ասել, որ դժգոյն են լուսանկարներ: Ծանկաւում ենք պ. Արեւելանին Գալաերոսեան արապի և շատի փոխարէն, Գրիգորեզովեան ծանրը:

Թ. Խօջապիր

Электротечания Груз. Изд. Т—ва, Б.-Ванеская ул.